տու և օգնական գտան ժողովուրդք Հայոց, որպէս յայտնի տեսանի 'ի նամակէ նորին զոր գրեաց 'ի Հայս առ Կոմիտաս Կաթողիկոսն. յորում յայտ առնէ զմխիթարութիւն եւ զխնդութիւն իւր ընդ գալուստ բազմամբոխ Ուխտաւորացն Հայոց 'ի Ս. Քաղաքն Երուսաղէմ, զամենայն անցս չարչարանաց զոր կրեցին 'ի Հրէից և 'ի Պարսից 'ի ժամանակին յայնմիկ, զնորոգութիւն և զպայծառութիւն Ս. Տեղեաց, զկարգաւորութիւն պաշտօնէից ըստ իւրաքանչիւր կարգի, զխաղաղութիւն սուրբ Քաղաքին և շրջակայից նորա. «Որպէս տեսին ասէ՝ Քրիստոսասէր մարդիկդ ձեր»։ Թէպէտ և առատասիրտ և կրօնասէր ժողովուրդն Հայոց յամենայնի ձեռնտու եղեն շինութեան և նորոգութեան Ս. Տեղեաց, սակայն Ցոյն երէցն վերատին զնոյն հայցէ 'ի Կաթողիկոսէն, ասելով. «Եւ արկցէ 'ի միտս ձեր անդադար աղօթելով վասն մեր, և մի' պակասել ամենեւին 'ի յիշել և 'ի նայել 'ի մեզ և յաղքատս Երուսաղէմի, և որ ինչ պիտոյ է ընուլ։ Եւ եթէ հնար իցէ զաստուածասէր ձեր նախանձդ և 'ի ձեռնտուութիւն չինածոյ կենարար չարչարանացն ձգել»։ Այս խնդրէ ընթեռնուլ զնամակն առաջի եպիսկոպոսաց և կղերացն Հայոց, և կնքէ զբան իւր։ Ընթերցեալ Կոմիտասայ զթուղթ Մոգեստոսի, գրեաց առ նա պատասխանի լի խնամութեամբ, ուր ընդ այլոց բանից յուշ ածէ նմա նաեւ զառաջին ուխտաւորսն Հայոց, որք յաճախէին 'ի Տնօրինական տեղիս Քրիստոսի։ Պապ. Սեբէոս 131. 135։

Զկնի բազմադիմի մարտից եւ պատերազմաց յաղթական գտեալ Հերակլի, եհաս մինչեւ 'ի դուռն Տիզբոն քաղաքի և 'ի հուր դատեցաւ զապարանն արքունի. թագաւորեաց Կաւատ և ետ սպանանել զԽոսրով և զորդիս նորին 40, խօսեցաւ հաշտութիւն ընդ կայսեր Ցունաց. և մինչդեռ զհետ եղեալ Ջանայր բարեկարգութեան աշխարհին, եհաս նմա վախճան կենաց թագաւորեալ ամ մի և ամիս 6։ Եւ եդին յաթոռ թագաւորութեան զԱրտաշիր զորդի նորա տղայ հասակաւ։ Լուեալ զայսոսիկ Հերակլի՝ գրեաց առ Խոռեմ եւ կոչեաց առ ինքն՝ խոստացեալ նմա զթագաւորութիւնն Պարսից։ Ընթերցեալ Խոռեմ զնամակն՝ թողու զԱղէքսանդրիա և փութանակի հասանէ